ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-13-Ի ՆԻՍՏԻ

ք. Երևան «16» մայիսի 2022թ.

2022 թվականի մայիսի 11-13-ին տեղի ունեցավ ՔՏՀԱ տեսչական մարմնի Կառավարման խորհրդի (այսուհետ նաև՝ Կառավարման խորհուրդ) հերթական նիստը՝ հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության նախագծին.

2. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրում նախատեսվող փոփոխություններին.

3. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնին հատկացված տարածքի (ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մանուշյան 8) վերանորոգման նպատակով բյուջետային վերաբաշխմանը (2.419.000 ՀՀ դրամ գումար կապի ծառայություններ տնտեսագիտական դասակարգման հոդվածի խնայված միջոցներից, 576.000 ՀՀ դրամ գումար համակարգչային ծառայություններ տնտեսագիտական դասակարգման հոդվածի խնայված միջոցներից, 2.415.710 ՀՀ դրամ գումար էներգետիկ ծառայություններ տնտեսագիտական դասակարգման հոդվածի խնայված միջոցներից դեպի շենքերի և շինությունների նորոգում և պահպանում հոդված).

4. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագծի քննարկում և հաստատում.

5. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում.

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Փամբուխչյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
Գ. Սանոսյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Հովհաննիսյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ն. Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա. Ղուլարյան	- Քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Ս. Թովմասյան	- ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար
Մ. Սանդոյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի կառավարման խորհրդի անդամ (համաձայնությամբ)

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ա. Դանիելյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ
Ա. Կարապետյան	- «Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի գործադիր տնօրեն
Մ. Հովհաննիսյան	- «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի քաղաքաշինության ամբիոնի պրոֆեսոր, ճարտարապետության թեկնածու

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 9 կողմ, 0 դեմ:

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Ա. Ասոյանը օրակարգում ընդգրկված 1-ին հարցի առնչությամբ ներկայացրել է դիտարկում առ այն, որ կողմ է քվեարկում՝ Հաշվետվության

3-րդ գլխից խախտումներ կատարած բժշկական հաստատությունների անվանումները հանելու պայմանով:

Ներկայացված դիտարկումն ընդունվել է. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության նախագծին.

2. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրում նախատեսվող փոփոխություններին.

3. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնին հատկացված տարածքի (ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մանուշյան 8) վերանորոգման նպատակով բյուջետային վերաբաշխմանը (2.419.000 ՀՀ դրամ գումար կապի ծառայություններ տնտեսագիտական դասակարգման հոդվածի խնայված միջոցներից, 576.000 ՀՀ դրամ գումար համակարգչային ծառայություններ տնտեսագիտական դասակարգման հոդվածի խնայված միջոցներից, 2.415.710 ՀՀ դրամ գումար էներգետիկ ծառայություններ տնտեսագիտական դասակարգման հոդվածի խնայված միջոցներից դեպի շենքերի և շինությունների նորոգում և պահպանում հոդված).

4. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագիծը.

ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունն ընդունվեց ի գիտություն:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Փամբուխչյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Ա. Հայրապետյան**